





ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021





ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021



Բովանդակություն

- 8 Ներածություն
- 9 Վերահավատարմագրում
- 10 Ուսումնական գործընթաց
- 14 Դրամաշնորհային ծրագրեր
- 27 ՀԱԱՀ ենթակառույցների վարգացում
- 36 Գիտական գործունեություն
- 42 Միջազգային համագործակցություն
- 47 Ուսանողական ակտիվություն
- 50 Ֆինանսներ
- 52 Դոնորներ եւ աջակիցներ





ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՀԱԱՀ ռեկտոր

Հայաստանի ազգայինագրարային համալսարանի սիրելի գործընկերներ:

Մեր համալսարանի պատմության 91-րդ տարին նշանավորվեց եւս մեկ էական առաջընթաց քայլով՝ ագրոտեխնոլոգիական կրթագիտական գերազանցության կենտրոնի վերափոխման ճանապարհին:

2021 թվականն արգասաբեր էր կրթության որակի բարձրացման, գիտական գործունեության ընդլայնման եւ կիրառական արժեքի ավելացման, նորարարական բազմաթիվ լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման, միջազգային համագործակցության աշխարհագրության եւ արդյունավետության մեծացման առումով:

Համալսարանում ներդրվել է դուալ կրթության համակարգը՝ GIZ-ի եւ մասնավոր 7 գինեգործական ընկերությունների հետ համագործակցությամբ: Շարունակվել են կրթական ծրագրերի բովանդակային վերափոխումները, ներդրվել են STEM ուղղվածության նոր առարկաներ: Մենք լուրջ ուշադրություն ենք դարձնում նպատակային վերապատրաստումների միջոցով դասախոսական անձնակազմի կարողությունների հպորացմանը. 2021-ին վերապատրաստվող դասախոսների թիվը տասն անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Համալսարանն իր տեղական ու միջազգային գործընկերների աջակցությամբ շոշափելի հաջողություններ է գրանցել կարճաժամկետ կրթական ծրագրերի իրականացման գործում. հացի, հրուշակեղենի եւ շոկոլադագործության, ջերմատնային մշակաբույսերի արտադրության, գինեգործության եւ գինու բիզնեսի, կաթնամթերքի արտադրության՝ տարբեր տեղողությամբ դասընթացները չնվազող պահանջարկ են ունեցել եւ հաջողությամբ շարունակվում են:

Երկրում գյուղատնտեսական ստարտափ էկոհամակարգի ստեղծման գործում իր ուրույն ու կարեւոր դերը հաստատեց համալսարանի Ագրոտեխնոլոգիական ինկուբատորը. պատահական չէ, որ գյուղատնտեսական ստարտափների ամենամյա մրցույթի երեք հաղթողներից երկուսը հետագայում վարձացրեցին իրենց հաջողությունները՝ հաղթելով նաեւ ավելի մեծ մրցույթներում:

Դրամաշնորհային ծրագրերը, որ առհասարակ վերջին տարիներին կարեւորագույն նշանակություն են ունեցել համալսարանի վերափոխման ու վարձացման գործում, 2021-ին շոշափելի առաջընթաց են ապահովել ենթակառուցվածքային վարձացման, հետապոտական ու գիտական ներուժի հպորացման, ուսանողակենտրոն միջավայրի ամբողջացման առումով: Բավական է նշել այգեպտղաբուծության վարձացման Ֆրուտենիա մեգանախագծի հաջող ընթացքը, նորարարական գյուղատնտեսական վերապատրաստման եւ ուսուցման ճամբարի գործարկումը, ԱՄՆ ՄԶԳ եւ այլ գործընկերների հետ Հայաստանում աշխատուժի վարձացման մեծամասշտաբ ծրագրի, անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանության աջակցությանը միտված SMARTI ծրագրի, տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակման GeoTAK ծրագրի եւ մի շարք այլ նախագծերի ու ծրագրերի մեկնարկը:

Ենթակառուցվածքի շարունակական վարձացման համատեքստում շատ կարեւոր է, որ տարվա ընթացքում, մայր բուհից բացի, դրական փոփոխություններ են իրականացվել կամ մեկնարկել նաեւ մասնաձյուղերում, քոլեջում, վարժարանում, ուսումնափորձարարական տնտեսություններում:

Այսօր Ագրարայինում ունենք գյուղատնտեսական կրթության, գիտության եւ խորհրդատվության, ընդհանուր առմամբ, ամբողջացված արդիական ուսանողակենտրոն միջավայր եւ, չնայած որոշակի արտաքին առարկայական դժվարություններին, վստահորեն շարունակում ենք երկրի տնտեսության առանցքային ոլորտի համար ագրոտեխնոլոգիական վերջին գիտելիքներով զինված մասնագետների պատրաստման մեր առաքելությունը:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին, հակառակ մեր երկրին բաժին հասած փորձությունների, մենք չընկճվեցինք եւ ամենօրյա նվիրյալ աշխատանքով ապահովեցինք հաջողությունների շարունակականությունը:

Այժմ գոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ 2021-ին, ընդհանուր առմամբ, հասել ենք մեր նախանշած բնագծերին՝ համալսարանի գործունեության հիմնական ուղղություններում՝ ուսումնական, գիտական, խորհրդատվական: Մենք եւս մեկ էական առաջընթաց քայլ ենք կատարել դեպի համալսարանի տեխնոլոգիական ապագան: Կրթական ծրագրերի կառուցվածքային եւ բովանդակային վերափոխման, դուալ կրթության, նորագույն մասնագիտությունների (կայուն եւ ձգձգիտ գյուղատնտեսություն, հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն եւ այլն) ներդրման եւ ստեղծված մի շարք արդիական ենթակառուցյունների (Ագրոճամբար, Ագրոդրոնների լաբորատորիա, Կաթնամթերքի վարպետաց դպրոց, Գարեջրագործության եւ թորման, Հացի-հրուշակեղենի եւ շոկոլադագործության լաբորատորիաներ եւ այլն), պրոֆեսորադասախոսական կազմի անընդհատ մասնագիտական վերապատրաստումների միջոցով մեկ հաջողվեց ընդհանուր առմամբ ամբողջացնել կրթական նոր միջավայրը:

Ագրարային համալսարանի մեծ ընտանիքը 2021-ին էլ ավելի ամրապնդվեց ներսից, դարձավ ավելի համերաշխ եւ կուռ, ձեռք բերեց նոր գործընկերներ, համախոհներ, գաղափարակիցներ ու աջակիցներ թե՛ Հայաստանում, թե՛ երկրի սահմաններից դուրս: Համատեղ ջանքերով մենք կարողացանք հասնել համալսարանի համբավի ու վարկանիշի բարելավմանը:

Հաշվի առնելով բարեփոխումների տեմպը եւ խորքային բնույթը, մեր գործընկերների ընդլայնվող ցանցն ու պետական աջակցությունը՝ անբեկանելի է. համալսարանում կշարունակվի բարեփոխումների խորացման, նոր ենթակառուցյունների ստեղծման գործընթացը: Ագրարայինը կշարունակի վարմացնել նոր ու տպավորիչ ձեռքբերումներով, նորարարություններով, ինչպես օրինակ՝ աշխատանքային կիսամյակի ներդրումը, նոր, ոչ միայն կրթագիտական, մեզանախագծերի իրականացումը, որոնք վարձացնելու են երկրի գյուղատնտեսության ու ագրոբիզնեսի ամբողջ ոլորտը, ստեղծելու են հապարավոր աշխատատեղեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԵԼ Է 4 ՏԱՐԻ

**«Մասնագիտական կրթության
որակի ապահովման ազգային
կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ)
Հավատարմագրման հանձնաժո-
ղովի մարտի 15-ի նիստի օրակար-
գը վերաբերում էր Հայաստանի
ազգային ագրարային համալսարա-
նի հաստատութենական հավա-
տարմագրմանը:**

Հանձնաժողովի անդամները քննարկել են արտաքին գնա-
հատման փորձագիտական վե-
կույցն ըստ հավատարմագրման
10 չափանիշի՝ դիտարկել դրա-
կան եւ բացասական գնահատ-
ված տիրույթները, առկա
խնդիրները, նախորդ հավա-
տարմագրումից ի վեր արձա-
նագրված առաջընթացը եւ
բարելավման ծրագրի իրա-
գործման արդյունքները:

Հավատարմագրման հանձ-
նաժողովի որոշմամբ Հայաս-
տանի ազգային ագրարային
համալսարանին շնորհվել է հաս-
տատութենական հավատար-
մագրում՝ 4 տարի ժամկետով:
Մինչ այս, ՀԱԱՀ-ն հաստատու-
թենական հավատարմագրում
ստացել էր 2015-ին, դարձյալ
4 տարի ժամկետով:





ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Տելսիկական առաջընթացի, տնտեսական հարաբերությունների դինամիկ պարզացման եւ այլ օբյեկտիվ իրողությունների բերումով ներկայում մեծապես փոփոխվել են աշխատաշուկայի պահանջները: Հայաստանի Հանրապետությունում ագրարային ոլորտի պահանջված մասնագիտությունների կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները աշխատաշուկայի պահանջներին համահունչ դարձնելու համար համալսարանը նախանշել է հետեւյալ հիմնական ուղղությունները՝


- Կրթական ծրագրերի կառուցվածքային եւ բովանդակային վերափոխում:
- STEM ուղղությունների պարզացում:
- Ուսանողակենտրոն, մրցունակ կրթության մոտեցումներին համահունչ արդի սարքավորումներով վերազինված ու կահավորված ուսումնական միջավայրի ստեղծում:
- Դասախոսական կազմի կարողությունների հպորացում, արտադրության գործող մասնագետների ներգրավում:
- Մեկ կիսամյակ տեւողությամբ վարձատրվող փորձուսուցումներ, դուալ մոտեցման կիրառում:
- Ստարտափ էկոհամակարգի, ինկուբատորների եւ աքսելերատորների պարզացում:
- Գիտության առեւտրայնացում:

Ի արձագանք աշխատաշուկայի պահանջների, որպես առաջին քայլ, մագիստրատուրայում իրականացվել է ուսումնական պլանների արդիականացում: Ունենք նոր՝ «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն», «Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն», «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ», «Կայուն գյուղատնտեսություն», «Ճշգրիտ գյուղատնտեսություն» կրթական ծրագրեր: «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված են հունական «Արատոս գրուպ» կապմակերպության ներկայացուցիչները եւ Արեւմտյան Մակեդոնիայի համալսարանի դասախոսական կապմը:

2021 թ. «Կայուն գյուղատնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագիրը տվեց իր առաջին շրջանավարտներին, որոնց 40 տոկոսը հետապնդություններն իրականացրել է միջազգային ծրագրերի, մասնավորապես՝ GIZ-ի շրջանակում:

Դասախոսական կապմի կարողությունների հպորացումը եւս առաջնային կարեւորություն ունեցող գործընթացներից է. 2021 թ. ՀԱԱՀ **446** աշխատակից վերապատրաստվել է տարաբնույթ թեմաներով, որը 10 անգամ ավելի է, քան 2020-ի, եւ 3 անգամ ավելի, քան 2019-ի ցուցանիշը:


Վերապատրաստված աշխատակիցների թիվը






Մարդկային կապիտալի վարձացման նպատակով ՀԱԱՀ-ի ֆինանսական ներդրումների ծավալը 2019-ի համեմատ ավելացել է 10 անգամ՝ 2021-ին կազմելով **2 455 500** ՀՀ դրամ:

Մարդկային կապիտալի վարձացման նպատակով ՀԱԱՀ-ի իրականացրած ֆինանսական ներդրումները (ՀՀ դրամ)



Ուսուցողական ծառայությունների դիմաց ֆինանսական ներհոսքի ծավալը 2021-ին ավելացել է 68 տոկոսով՝ կազմելով **6 170 000** ՀՀ դրամ:

Ուսուցողական ծառայությունների դիմաց ֆինանսական ներհոսքը (ՀՀ դրամ)



ԴՌՈՒԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ



Implemented by
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Մասնավոր հատվածի վարձացում եւ մասնագիտական կրթություն եւ ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում ՀԱԱՀ-ի եւ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) միջեւ կնքված պայմանագրի համաձայն ներդրվել է Գինու ոլորտում դուրս ՄԿՈՒ ծրագիր: Իրականացվել է գինեգործական բնագավառի 7 մասնավոր ընկերությունների կարիքների գնահատում, վերանայվել են ուսումնական պլանի կառուցվածքը եւ տարրերը, վերանայվել եւ մշակվել են մոդուլային ծրագրեր:

Դուրս աշխատանքի վրա հիմնված ուսուցումն այսօր հաջողությամբ կիրառվում է ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում: Գործընկեր գինեգործարաններում իրականացվող փորձուսուցումներն ու աշխատանքային կիսամյակը արդյունավետ բովանդակություն են հաղորդում դուրս կրթությանը: Ընդ որում ուսումնական պլանը, դասավանդվող մոդուլների կառուցվածքն ու քննությունների անցկացումը հիմնված են պետական չափորոշիչների, գերմանական համապատասխան փորձի եւ գինեգործական մասնավոր ընկերությունների առկա կարիքների վրա: Դուրս մասնագիտական կրթության գործնական նպատակների իրականացմանը մեծապես նպաստում են համալսարանի Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսությունն իր խաղողի այգիով, գինեգործարանով եւ Գինու ուսումնագիտական կենտրոնով, ինչպես նաեւ Գինու ակադեմիան՝ գինու քիմիայի լաբորատորիայով եւ համտեսի սրահով:



ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՖՐՈՒՏԵՆԻԱ)

fruitenia

Ակտիվ իրականացման փուլում են ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ագրոտեխնիկական եւ կրթական բաղադրիչների աշխատանքները:

Ագրոտեխնիկական բաղադրիչի շրջանակում ՀԱԱՀ «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում 2021 թ. փետրվարին մեկնարկել են 1,5 հա ցուցադրական ինտենսիվ պտղատու այգու հիմնման աշխատանքները. տնկվել է Իտալիայից պատվիրված **դեղձենու 12, սալորենու 10, կեռասենու 16** սորտերի **700** եւ **ծիրանենու տեղական 2** սորտի **132** տնկի:


14





Շահագործման հանձնվեցին նաեւ հակակարկտային եւ այգու կաթիլային ոռոգման համակարգերը՝ հեռավար կառավարման հնարավորությամբ: Ինտենսիվ այգու մշակության աշխատանքներն ավելի արդյունավետ կատարելու նպատակով ՀԱԱՀ-ի եւ

ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի միջեւ ստորագրված «Գյուղատնտեսական տեխնիկայի անհատույց օգտագործման համաձայնագրի» հիման վրա նախագծի շրջանակում ձեռք բերված գյուղատեխնիկան (տրակտոր՝ Dongfeng DF-504, մուլչեր՝ Shaktiman BMF 1.8, կուլտիվատոր՝ Shaktiman SRT-1.55, սրսկիչ՝ Agromaster TAS 600 եւ միսի գութան՝ Agromaster 4-furrow micro plough) հանձնվեց ՀԱԱՀ «Ոսկեհատ» տնտեսությանը:



Այգու տարածքում շարունակվում են բարեկարգման եւ ենթակառուցվածքների կառուցման/վերանորոգման աշխատանքները: Մասնավորապես տարածքը ապահովվել է էլեկտրականությամբ եւ համացանցով, վերանորոգվել է դաշտային պահեստը, տեղադրվել են լուսատուներ եւ տեսահսկման համակարգ:



ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի **կրթական բաղադրիչի** շրջանակում մշակվել կամ արդիականացվել են «Պտղատու ծառատեսակների էնտոմոֆաունա եւ պայքար», «Պտղատու ծառատեսակների հիվանդություններ եւ պայքար», «Տնկա-



րանների հիմնում եւ կառավարում», «Ընկույվաժոր պտղատեսակների հիմնում եւ կառավարում», «Ինտենսիվ այգիների հիմնում եւ կառավարում», «Պտղաբուծություն» եւ «Կայուն գյուղատնտեսության հիմունքներ» ձեռնարկները, որոնք տրամադրվել են ՀԱԱՀ ագրոնոմիական ֆակուլտետին:


Նախագծի շրջանակում համագործակցության հուշագրեր են կնքվել մի շարք քոլեջների հետ, նախատեսվում է ՀԱԱՀ-ի պտղատու ինտենսիվ այգում կապմակերպել ուսումնական այցեր՝ ուսանողների, դասախոսների, մասնագետների համար, մշակել ձեռնարկ այգեպտղաբուծության վերաբերյալ եւ այն տրամադրել նաեւ քոլեջներին, իրականացնել վերապատրաստողների վերապատրաստում քոլեջների դասախոսների համար՝ այգեպտղաբուծության մասնագիտական ուղղվածությամբ, եւ հնարավորություն տալ քոլեջներին ուսումնական նպատակներով օգտագործել այգեպտղաբուծության վերաբերյալ կայքը:



AYGI.AM ԿԱՅՔԸ



ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում ստեղծված www.aygi.am կայքը հնարավորություն է ընձեռում պտղաբուծության ոլորտի



շահառուներին ձեռք բերել ոլորտին առնչվող գիտելիքներ: Թեմաների ընդգրկումով, հրատապությամբ եւ նյութերի բովանդակությամբ կայքն անսխադեպ է մեր իրականությունում: Այն նախատեսված է գլխավորապես ֆերմերների եւ ուսանողների համար, սակայն կարող է մեծապես օգտակար լինել նաեւ ոլորտով հետաքրքրված մասնագետներին եւ հետազոտողներին:

Կայքի «Հրապարակումներ եւ խորհրդատվություն» բաժինը բովանդակում է արժեքավոր մասնագիտական խորհրդատվական նյութեր, տարբեր պտղատեսակների արտադրության վերաբերյալ ուղեցույցներ, որոնք ընդգրկում են այգու հիմնման եւ կառավարման, օրգանական գյուղատնտեսության, բերքահավաքի, պարարտացման, ոռոգման, վնասատուների, մոլախոտերի եւ հիվանդությունների դեմ պայքարի, ծառերի էտի, կլիմայադիմակայուն խելամիտ գյուղատնտեսության, գյուղատնտեսական թափոնների կայուն կառավարման, շրջանաձեւ տնտեսության, հետբերքահավաքային կորուստների նվազեցման եւ բավաթիվ այլ առանցքային թեմաներ: Մասնագիտական տեսանյութերը նույնպես ունեն բավականին հարուստ բովանդակություն՝ ավանդական եւ ինտենսիվ այգիների էտից ու ձեւավորումից մինչեւ հիվանդությունների եւ վնասատուների դեմ պայքար, ինչպես նաեւ հաջողության պատմություններ: Կայքը տեղեկություններ է տալիս ոլորտում իրականացվող վերապատրաստման ծրագրերի, նախագծերի, գյուղատնտեսական ստարտափների մրցույթների, ինչպես նաեւ տնկարանների, հողանմուշների լաբորատոր փորձաքննության, բույսերի պաշտպանության, պտղաբուծության բնագավառներում մատուցվող փորձագիտական ծառայությունների մասին:



ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ (ԱԳՐԻ ՔԵՄՓ)

AGRI CAMP

«Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» նախագիծն իրականացվում է Ագրոբիվնեսի հետապոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի հետ համատեղ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:



2021 թ. ԱԳՐԻ ՔԵՄՓ ծրագրի շրջանակում ավարտին հասցվեցին «Զարթոնք» հանգստյան տան հարկաբաժինների, հանդիպումների սենյակի, խոհանոցի ու ճաշարանի վերանորոգումը, կահավորումը եւ հարակից տարածքի բարեկարգումը, իսկ հոկտեմբերի 12-ին «Ագրոճամբար» ուսումնական կենտրոնն իր հյուրընկալ դռները բացեց ծրագրի շահառուների համար:



Ծրագրի կարեւոր բաղադրիչներից մեկն էլ ՀԱԱՀ ուսանողներին տրամադրվող հետապոտական դրամաշնորհներն են: 2021 թ. ավարտին համալսարանի 8 ուսանող ստացել է դրամաշնորհներ: Թեմաները հիմնականում ընդգրկել են բուսաբուծության, այգեգործության, սննդի եւ խմիչքների արտադրության ոլորտները:



Ծրագրի շրջանակում իրականացվում է նաև AgriThon-ը, որը գյուղատնտեսության ոլորտում նորարարական լուծումներով ստարտափ գաղափարների մրցույթ է:

Որպես 2021 թ. ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթի արդյունք՝ ընտրվել են 43 ստարտափ թիմեր/գաղափարներ, որոնցից 15-ն անցել է ինկուբացիայի երկրորդ փուլ: Երկրորդ փուլ անցած թիմերից 2-ն ամբողջությամբ

համալրված են ՀԱԱՀ դասախոսներով եւ ուսանողներով, իսկ մյուս թիմերի անդամներից շատերը ՀԱԱՀ շրջանավարտներ են:

Ծրագիրն իրականացնում է նաև դասընթացներ կին ձեռնարկեցների համար. 2021 թ. դասընթացներին մասնակցել է ավելի քան 350 կին:

Դասընթացներ են անցկացվել նաև գյուղատնտեսական եւ սպառողական կոոպերատիվների անդամների եւ ֆերմերների համար:





ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2021 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ԱՄՆ ՄԶԳ-ի Հայաստանում աշխատուժի վարճացման (Armenian Workforce Development Activity) ծրագրի շնորհանդեսը, որն իրականացնում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի եւ «Սիվիտա Հայաստան» գործարար խորհրդատվական ընկերության հետ գործակցությամբ՝ Բարձր տեխնոլոգիաներ, Գյուղատնտեսություն, Զբոսաշրջություն/հյուրընկալություն ուղղություններով:



Նպատակն է աջակցել հայ երիտասարդների ժամանակակից աշխատանքային հմտությունների ձեռք բերմանը եւ վարճացմանը:

Ծրագրի գործունեության ժամանակահատվածը 2021 թ. հոկտեմբերից 2026 թ. սեպտեմբեր է: Հինգ տարվա ընթացքում կվերապատրաստվի շուրջ 10 հազար մասնագետ, որից ավելի քան 3200-ը՝ ագրարային ոլորտի: Թիրախային խումբը երիտասարդները եւ կանայք են, որոնք, որպես ծրագրի արդյունք, աշխատանք կգտնեն գյուղատնտեսության, ՏՀՏ, զբոսաշրջության եւ հյուրընկալության ոլորտներում: 7000 երիտասարդ աշխատանքի է անցնելու կամ ավելի լավ աշխատանք է ունենալու, որոնցից մոտ 2240-ը՝ ագրարային ոլորտում:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ



Universität für Bodenkultur Wien
University of Natural Resources
and Life Sciences, Vienna



ՀԱԱՀ-ն իր գործընկեր Վիեննայի բնական ռեսուրսների եւ բնական գիտությունների համալսարանի (BOKU) հետ շահել է Ավստրիական վարձագման գործակալության APPEAR advanced դրամաշնորհային ծրագիրը, որը

նախկինում արդեն իրականացված «Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ձեւավորում. Օրգանական շահակիցների գիտելիքների եւ հմտությունների բարելավում մասնակցային ուսումնական պլանի մշակման եւ իրազեկման միջոցով» ծրագրի տրամաբանական շարունակությունն է:

Նպատակն է գնահատել եւ բարելավել արդեն գործող «Օրգանական գյուղատնտեսություն» կրթական ծրագիրը, ստեղծել ուսանողական ագարակ, օրգանական գյուղատնտեսության ոլորտում ներդնել կարճաժամկետ ծրագրեր:

Ծրագիրը համակարգում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ Վիեննայի բնական ռեսուրսների եւ բնական գիտությունների (BOKU) համալսարանի գործակցությամբ:

BOKU-ի թիմը աջակցելու է ՀԱԱՀ աշխատակիցներին՝ միջազգային ծրագրերի համակարգման կարողությունները բարելավելու հարցում:

Ծրագրի գործունեության ժամանակահատվածն է 2022 թ. մարտի 1-ից մինչեւ 2025 թ. փետրվար:



Visegrad+ ՓԱՓՈՒԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ. V4 ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

• Visegrad Fund

Ծրագիրը համաֆինանսավորում են Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի եւ Սլովակիայի կառավարությունները՝ Վի-

շեգրադի միջազգային հիմնադրամի Վիշեգրադի դրամաշնորհների միջոցով: Գլխավոր համակարգողը Հայաստանի ազգային ագրարային համալսարանն է: Ծրագիրը կիրականացվի Հունգարիայի գյուղատնտեսական եւ կենսագիտական (ՀԳԿՀ), Նիտրայում Սլովակիայի գյուղատնտեսական (ՍԳՀՆ) եւ Հարավային Բոհեմիայի համալսարանների (ՀԲՀ) աջակցությամբ:

Նախագծի նպատակն է ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթության ընթացքում տարբեր մոդուլների դասավանդմամբ փափուկ հմտությունների զարգացման եւ կատարելագործման միջոցով բարձրացնել աշխատաշուկայում ուսանողների եւ առկա մասնագետների մրցունակությունը:

Ծրագրի շրջանակում ՀԱԱՀ-ն կստեղծի Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն (ՓՀԶԿ):

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ (SMARTI)



Ծրագրի նպատակն է մշակել թափանցիկ ազգային եւ միջազգային կրթական չափորոշիչներ, ուսումնառության համադրելի վերջնարդյունքներ եւ դասավանդման մեթոդներ՝ Բոլոնիայի չափորոշիչներին համապատասխան, վերապատրաստման կայուն կրթական ծրագրերի մշակման միջոցով բարձրացնել ակադեմիական բովանդակության, անձնակազմի, ուսանողների դասախոսների որակավորումը, աջակցել ծրագրի մասնակից ԵՄ, հայկական եւ ռուսական հաստատությունների միջազգայնացմանը, անձնակազմի եւ ուսանողների շարժունությանն ու փոխանակմանը:



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՂՂՋԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՑԱՆՅԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ (GEOTAK)



Ծրագրի նպատակն է վարձացնել հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերը երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (ԵՏՏ) ոլորտում եւ ամ-

րալնդել հետապոտական եւ նորարարական կապերը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղվստանի Բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերության եւ վարչարարական համակարգերի միջեւ:

Ծրագրի շրջանակում համագործակցող երկրների միջեւ կստեղծվեն հետապոտական հանգույցներ ԵՏՏ ոլորտում՝ համատեղ նորարարական նախագծերն ու հետապոտական աշխատանքները խթանելու եւ ներդաշնակեցնելու համար, կբարելավվեն ԵՏՏ հետապոտական լաբորատորիաները, կվերապատրաստվի դասախոսական կազմը, կստեղծվեն միջառարկայական հետբուհական ծրագրեր (դասընթացներ եւ համատեղ ասպիրանտական ծրագրեր), որոնք բարձրացնում են ԵՏՏ-ի ներուժը տարբեր ոլորտներում ու աստիճաններում, հետապոտական արդյունքները կենտրոնացնում ժամանակակից խնդիրների վրա տարածաշրջանային եւ գլոբալ մասշտաբներով:

A group of people are gathered in a greenhouse, observing and photographing plants. A man in a black t-shirt with "MUSCLE & STRENGTH" printed on the back is in the foreground, looking at a plant. Other people, including a woman in a striped dress and a man with a camera, are also present, looking at the plants. The greenhouse has a white plastic covering and rows of plants.



Ծրագրի շրջանակում կիրականացվի սերմերի եւ տնկանյութի մասնագիտական հավաստագրողների եւ փորձորոշողների վերապատրաստման դասընթաց, որը կներառի տեսական եւ լաբորատոր դասաժամեր, ինչպես նաեւ գործնական այցեր տնկարաններ:



ԳՈՄԱՂԲԻ ԵՒ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

2021 թ. մեկնարկել է «Գոմաղբի եւ կաթնամթերքի թափոնների կայուն կառավարման պիլոտային ծրագիրը Գեղարքունիքի մարզում», որն ուղղված է Սեւանա լճի կենսածին ծանրաբեռնվածության թուլացմանը:



Ծրագիրը հետապնդողական բնույթի է եւ իրականացվում է ՀԱԱՀ մասնագիտական թիմի միջոցով՝ GIZ-ի ֆինանսական աջակցությամբ: Ընտրված է թիրախային 19 համայնք՝ Սեւանա լճի հարակից տարածքներում, որոնք համարվում են լճի հիմնական կենսածին ծանրաբեռնվածությունը ստեղծողները: Համայնքների ուսումնասիրության, առկա միջազգային եւ տեղական փորձի վերլուծության եւ դրանց կիրառելիության գնահատման միջոցով ծրագիրը նախանշելու է գոմաղբի եւ գոմաղբահեղուկի վնասապերժման եւ մշակման ուղիներ, որոնք կկանխարգելեն կենսածին տարրերի հոսքը դեպի Սեւանա լիճ՝ լուծելով բնապահպանական այնպիսի խնդիր, ինչպիսին լճի եվտրոֆացումն է:

ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2021 -ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կատարվել են ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի փոխակերպվելուն նպաստող ուսումնառական ենթակառուցվածքների ստեղծման ու վերակառուցման լայնածավալ աշխատանքներ:

ՀԱԱՀ-ի եւ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) համագործակցությամբ, ՀՀ ԿԳՄՍ Նախարարության ֆինանսավորմամբ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում նորոգվել են լաբորատոր տարածքներ՝ հարակից միջանցքներով, աշխատասենյակներով, սանհանգույցներով, աստիճանավանդակներով, ավարտին են մոտենում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով եւ գույքով ապահովված կենսագիտության ինկուբատոր - բաց լաբորատորիայի ստեղծման աշխատանքները:

2-րդ մասնաշենքում վերանորոգվել է գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերի լաբորատորիայի համար նախատեսված տարածք, որտեղ ցուցադրվելու են GeoTAK եւ «ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU-GAIA)» ծրագրերից որպես նվիրատվություն ստացված գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերը՝ ագրոդրոնները, որոնք կօգտագործվեն համալսարանի Ոսկեհատի եւ Ակունքի ուսումնափորձարարական տնտեսություններում այգիների եւ դաշտերի բուծման եւ պարարտացման նպատակներով:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Ագրոբիվենսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի AGRI CAMP ծրագրի շրջանակում ՀԱԱՀ «Զարթոնք» հանգստյան տան ամբողջ 3-րդ հարկը, 2-րդ հարկի հանդիպումների սրահը, 1-ին հարկի ճաշարանը՝ հարակից ձեմասրահով եւ սանհանգույցներով, լիովին վերանորոգվել ու կահավորվել են, իսկ 4-րդ եւ 5-րդ հարկերը ենթարկվել են ձեւափոխության ու մասնակի վերանորոգման:



■ ՀԱԱՀ վարժարանը համալրվել է քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի եւ համակարգչային դասասենյակներով, որոնք վերապինվել են ԱՀԿՄԿ հիմնադրամի եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:




■ Շվեյցարիայի վարգացման եւ համագործակցության գործակալության աջակցությամբ գործող «Ռազմավարական վարգացման գործակալություն» ՀԿ-ի եւ ՀԱԱՀ ակտիվ համագործակցության շնորհիվ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում հիմնվել է Հացի, հրուշակեղենի եւ շոկոլադագործության ուսումնական



լաբորատորիա, որտեղ, բացի համալսարանի ուսումնական պարապմունքներից, 2021 թ. ընթացքում անցկացվել են նաեւ վճարովի կարճաժամկետ դասընթացներ:



■ «Ռապնավարական վարձացման գործակալություն» ՀԿ-ի հետ գործակցության լավագույն արդյունք է նաեւ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ում ստեղծված Կաթնամթերքի վարպետաց դպրոցը, որի



վերանորոգման ու կահավորման աշխատանքների մի մասն էլ իրականացվել է բարերարներ Զուլիկ Սարյանի եւ Վիկտոր Զառուկյանի տրամադրած միջոցներով: Ստեղծվել է բարեկարգ եւ պատշաճ կահավորված տարածք, որտեղ գիշերակացով կարճաժամկետ դասընթացներ են անցկացվում: Այդ դասընթացների առաջին մասնակիցներից 20-ը Արցախից էին:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ում վերանորոգվել է նաեւ ոչխարանոց՝ հատուկ «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի օժանդակությամբ ձեռք բերված ֆրանսիական բլանշ ցեղի տոհմային ոչխարներ պահելու համար:



■ Վերանորոգվել են ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի տանիքի՝ քամու հետեւանքով քանդված հատվածը եւ ՀԱԱՀ «Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում ուսումնափորձարարական լաբորատորիայի տարածքը: Մասնաճյուղը 2021 թ. համալրվել է նաեւ Կաթի վերամշակման ուսումնական արտադրամաս-լաբորատորիայով, որի կաթի եւ կաթնամթերքի տեխնո-



լոգիայի լաբորատոր սարքավորումները տրամադրել է «Մարդը կարիքի մեջ (People in Need)» ԲՀԿ հայաստանյան ներկայացուցչությունը:



«Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում բացվել է նաեւ Գիտելիքի նորարարական հաբ՝ Կանաչ արահետ ՀԿ-ի հետ գործակցությամբ, եւ Հողի անալիզի լաբորատորիա՝ «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի օժանդակությամբ:

ԼՈՌԵՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱԲԸ

■ Կանաչ արահետ ՀԿ-ի հետ գործակցությամբ Գիտելիքի Նորարարական հաբ է բացվել Նաեւ ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղում:



Գիտելիքի Նորարարական հաբերի նպատակն է կարողությունների վարճացման միջոցով աջակցել երիտասարդների վճարվածությանը եւ սոցիալական ձեռներեցության ու կանաչ նորարարության համար ստեղծել նպաստավոր էկոհամակարգեր:

Լոռու հաբի բացումից՝ 2021 թ. հուլիսի 15-ից մինչեւ տարեվերջ այստեղ անցկացված 55 միջոցառմանը մասնակցել է շուրջ



ՆԱԵՎ ՀԱԱՀ ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ



600 երիտասարդ՝ մարզկենտրոնից եւ գյուղական համայնքներից: Համագործակցելով ՀԿ-ների, կրթական հաստատությունների, ՏԻՄ-երի հետ՝ հաբում անցկացվել են երիտասարդների կարողությունների վարձագմանը եւ կապերի հաստատմանը նպաստող բազմաբնույթ միջոցառումներ, որոնք հիմնականում վերաբերում են բնապահպանությանը, գյուղատնտեսությանը եւ հարակից ոլորտներին: Հաբն ունի նախաձեռնող խումբ, 60 ակտիվիստ, տարաբնույթ ակումբներ (բանավեճի, անգլերենի, գրքերի քննարկման, հայկական պարերի եւ այլն): Քննարկումներից վատ՝ հաբի մասնակիցներն ու շահառուները գործնականում իրականացնում են բնապահպանական ուղղվածության աշխատանքներ:

Այստեղ դպրոցական եւ ուսանող երիտասարդները սովորում են մրցունակ դրամաշնորհային հայտեր գրել, մասնակցում են մշակութային, սոցիալական, մարզական, ստեղծագործական մրցույթների: Վանաձորի ավագանին հաբում ունի իր օգնականները, որոնք երկկողմանի փոխշահավետ կապ են ապահովում ավագանու եւ քաղաքի երիտասարդության միջեւ, նպաստում երիտասարդների ներգրավմանը ՏԻՄ գործունեությանը:


Հաբը կարճ ժամանակամիջոցում կարողացել է ոչ միայն դառնալ պարզապես քաղաքի եւ մարզի երիտասարդության հանդիպման սիրելի վայրը, այլեւ՝ կարելի է հարթակ, որ երիտասարդները բավականին արդյունավետորեն օգտագործում են մարզում առկա սոցիալական, գյուղատնտեսական, բնապահպանական, կրթական եւ այլ հրատապ խնդիրներն ու լուծման սեփական պատկերացումները մարզում որոշում կայացնողներին հասցնելու համար:

Լոռու Գիտելիքի նորարարական հաբն ընդլայնում է գործակցության սահմանները՝ «բարեկամանալով» ոչ միայն մարզային, այլեւ ազգային, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների հետ՝ թե մայր բուհի եւ մասնաճյուղի հնարավորություններն օգտագործելով եւ թե սեփական նախաձեռնությամբ:

Հաբի ակնհայտ հաջողություններում իր մեծ վաստակն ունի համադրող Տաթևի Հովսեփյանը՝ երիտասարդ առաջնորդ, որ կարողանում է իր հետեւից տանել սերնդակիցներին եւ գրանցել կոնկրետ արդյունքներ:



■ 2021-ին Վանաձորի մասնաճյուղի ենթակառույցներին ավելացել է եւս մեկը՝ ջերմատունը, որի կառուցումն իրականացվել է My Forest Armenia բնապահպանական հասարակական կազմակեր-



պության հետ գործակցությամբ: Ջերմատանը աճեցվում է փշատերեւ ծառատեսակների շուրջ 40 000 տնկի, որոնք շուտով կօգտագործվեն Հայաստանի անտառվերականգնման ընթացքում:

■ ՄԱԶԾ օժանդակությամբ ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղում իրականացվել են թանգարանի վերանորոգման աշխատանքներ:



Ընթացիկ տարում ՀԱԱՀ-ն ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեից անհատույց օգտագործման իրավունքով ձեռք է բերել երեք տրանսպորտային միջոց, որոնք հնարավորություն են տվել կրճատել ավտոպարկի շահագործման ծախսերը:



Անհատ բարերարների ներդրումներով լիովին կահավորվել է «բաց տարածք» ոճով վերանորոգված նախկին մամուլի սենյակը:



«Արդշինբանկ» ՓԲԸ-ի եւ «Փառնագեան ընտանիք» հիմնադրամի աջակցությամբ նման մեկ այլ հարկաբաժին էլ վերանորոգվել եւ լիովին կահավորվել է՝ վերածվելով ժամանակակից ընթերցասրահի:

■ Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության ֆակուլտետի Արեշի մասնաշենքերից մեկում ավարտվել են Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրով Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի (ԱԿԳԿ) ստեղծման համար սենյակների վերանորոգման աշխատանքները: Կենտրոնի ստեղծումը կնպաստի ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստմանն ու բուծ-աշխատաշուկա կապի ամրապնդմանը:





- 1.** «Գյուղատնտեսական մեքենասարքավորումների ուսումնական եւ վերապատրաստման կենտրոնի ստեղծում»՝ Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ:
- 2.** Խելացի անասնաշենքի եւ ջերմատան կառուցում ու սարքավորումներով հագեցում՝ Հայ օգնության ֆոնդի ֆինանսավորմամբ:
- 3.** Հիդրոպոնիկ կերատեսակների արտադրության հիմնում եւ դասընթացների իրականացում՝ GIZ-ի ֆինանսավորմամբ:

Ընդհանուր առմամբ, 2021 թ. ընթացքում ՀԱԱՀ-ում կատարվել են շուրջ 170 մլն դրամի շինվերանորոգման, բարեկարգման եւ նյութատեխնիկական բազայի համալրման աշխատանքներ, որոնց գերակշիռ մասը՝ աջակիցների եւ գործընկերների տրամադրած միջոցներով:



ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտության ոլորտի նյութական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հետապնդությունները չկրկնելու նպատակով ՀԱԱՀ-ը գիտահետազոտական ոլորտում իրականացրել է կառուցվածքային բարեփոխումներ: 2021 թ. 2 միավորով կրճատվել է գիտական ստորաբաժանումների թիվը, սակայն գիտական բոլոր ուղղությունները պահպանվել են: ՀՀ պետական բյուջեից գիտական, գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը 2021 թ. կրճատվել է 7 %-ով և կազմել է 219,8 մլն դրամ, սակայն նախատեսված բոլոր 10 ծրագրերը կատարվել են ամբողջությամբ:

Գիտական կառույցների և ստորաբաժանումների ֆինանսավորման բաշխվածությունը (մլն ՀՀ դրամ)

3 գիտական կենտրոն-մասնաճյուղեր	165,845	75%
2 ԳՀ ինստիտուտ	30,839	14%
3 հետազոտական կենտրոն	23,159	11%
	219,843	100%

■ ՀԱԱՀ Գյուղմեքենայացման եւ ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտի դաշտավարության մեքենայացման բաժնի ճարտարագետների խումբը՝ դոցենտ Արթուր Ալթունյանի գլխավորությամբ Արմորոդէքսպո 2021 մասնագիտացված ցուցահանդեսում առաջին անգամ լայն հանրությանը ներկայացրեցին իրենց ստեղծած՝ **ծառերի միջբնային տարածությունների հողամշակման երկու ֆրեյզը**՝ նախատեսված համապատասխանաբար ավանդական եւ ինտենսիվ այգիների համար: Մեր մասնագետների ստեղծած մեքենաները շուկայում առանձնանում են դյուրօգտագործելիությամբ, արդյունավետությամբ, քարքարոտ հողային պայմաններին առավելագույնս հարմարվածությամբ, մատչելիությամբ եւ, որ թերեւս մեր արտադրանքի ամենամեծ առավելությունն է՝ անվտանգությամբ:



Դեկտեմբերին դոցենտ Ալթունյանի թիմը **հաղթող ճանաչվեց Հանրային հեռուստաընկերության «Գաղափարից՝ բիզնես» հեղինակավոր մրցույթում** եւ մեկնարկային բիզնես վարձացնելու նպատակով պարգևատրվեց 10 մլն դրամի ֆինանսավորմամբ: Ծրագրի շրջանակում թիմը պատրաստելու է ինտենսիվ պտղատու եւ խաղողի այգիների միջբնային ու միջվազային տարածությունների հողի մշակման աշխատանքների մեքենայացման, մոլախոտվածության դեմ մեխանիկական պայքարի համար նախատեսված այգեփոր ֆրեյզիչ եւ մերձբնային ու միջբնային տարածությունների խոտհնձիչ մեքենաներ:



■ Եթե 2020 թ. կատարվել է պայմանագրային թեմատիկ ֆինանսավորմամբ (դրամաշնորհային ծրագիր) 11 թեմա եւ երիտասարդ գիտնականների աջակցման 2 ծրագիր (46,8 մլն դրամ գումարով), ապա 2021 թ. իրականացվել է 4 միջազգային գիտական թեմա, 2 գիտական թեմա միջազգային համաֆինանսավորմամբ: 2021 թ. համալսարանը շահել է դրամաշնորհային 16 ծրագիր՝ **422 մլն դրամ** ընդհանուր բյուջեով՝ 9 անգամ ավելի, քան 2020-ին:

«Հյուսիսային Կովկասում պոռնոտիկ ինֆեկցիաների քարտեզագրում» ծրագիրը իրականացվել է ԱՄՆ ռազմական սպառնալիքների կրճատման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի գործընկերներ՝



«Ուղղորդված պրոբիոտիկներ ակվակուլտուրաների համար» ծրագիրը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության եւ Ուկրեյնայի գիտական կառույցների հետ:



«Հացահատիկի ենթահամալիրի վարգացման հեռանկարները եւ արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առեւտրատնտեսական հարաբերությունների համատեքստում» ծրագրի արդյունքները կարելի էր նախադրյալ են երկրի պարենային անվտանգության խնդիրների լուծման տեսանկյունից:

Ծրագրի գործընկերներ՝



«Մեթանի ձեւավորումը սուլֆիդ եւ նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում» (AZ93573) դրամաշնորհային նախագիծը իրականացվում է Բեռլինի քաղցրահամ ջրերի

էկոլոգիայի եւ ջրամբարային ձկնաբուծարանների Լայբնիցի ինստիտուտի հետ գործակցությամբ: Նախագծի շրջանակում կստեղծվի Բնապահպանական կենսաքիմիայի լաբորատորիա, որը կլրացնի համալսարանում արդեն շարք մտած արդիական ենթակառույցների ցանկը: Ծրագրի գործընկերներ՝



«Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը»

թեման իրականացվելու է 5 տարվա ընթացքում ԱՄՆ-ի համապատասխան գիտական կառույցների հետ գործակցությամբ:



2021 թ. հոկտեմբերին մեկնարկած այս ծրագրի արժեքը 156 մլն դրամ է: Ինչպես նշում է ծրագրի ղեկավար դոկտ. Աստղիկ Փեփոյանը, ջերմային սթրեսը լրջորեն ազդում է ձկների աճի, իմունիտետի եւ հիվանդությունների նկատմամբ դիմա-




դրողականության վրա: Նախագծի նպատակն է ջերմային սթրեսի նկատմամբ ընտանի թռչունների (մասնավորապես՝ հավերի) եւ ձկների (Սեւանի իշխանի ենթատեսակներ) դիմադրողականությունը բարձրացնելու համար գիտագործնական հիմքերի մշակումը: Կգնահատվեն հավերի եւ ձկների ջերմային սթրեսի եւ դրանց աղիքային միկ-

րոբիոտանների միջեւ փոխկապակցվածության վարկածները: Կենսամարկերների հիման վրա կտրվի ֆեկալ տրասպլանտներով՝ ընտանի թռչունների, եւ պրոբիոտիկներով՝ ձկների ջերմակայունության կարգավորման աշխատանքային վարկածների փորձարարական գնահատականը:



Հաշվետու ժամանակահատվածում ակտիվացել են գիտական հրապարակումները. հրապարակված գիտական հոդվածների թիվը 2021 թվականին կազմել է **192** (33 % աճ), որից **92**-ը (84 % աճ)՝ միջազգային գիտական պարբերականներում, այդ թվում՝ 25-ը բարձր ազդեցության գործոն ունեցող պարբերականներում:


Գիտական հրապարակումներ



- Գիտական հոդվածների եւ գիտաժողովների Վեկույցներ
- Գիտական հոդվածների եւ գիտաժողովների Վեկույցներ միջազգային գիտական պարբերականներում

ՀԱԱՀ գիտական խորհրդի 2021 թ. մարտի 15-ի նիստի որոշմամբ լրավճարների գումարի չափերը բարձրացվել են: 2021-ին ընդունվել է **111** գիտական աշխատանք, **123** հեղինակներին վճարվել է **5,4** մլն դրամ լրավճար, որը մոտ **89** %-ով ավելի է, քան 2020-ին 95 շահառուի՝ 115 հոդվածի համար վճարված 2,8 մլն դրամը:


Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթաց (ՀՀ դրամ)



- Պարգևավճար
- Գիտական աշխատանքներ
- Հեղինակների թիվը

Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2021-ին շահել է **30,3 մլն դրամ**՝ 6 անգամ ավելի, քան 2020-ին:

Նյութատեխնիկական բազայի արդիականացման ֆինանսական աջակցության չափը (ՀՀ դրամ)



Համալսարանի գիտական խորհրդի ընդունած գիտական աշխատողների որակավորման կանոնակարգի որակական եւ քանակական չափանիշները ելակետ ունենալով՝ 2021 թ. իրականացվել է շուրջ 100 գիտական աշխատողների որակավորման գործընթաց, որով համալսարանում գիտական աշխատողների վարձատրության նոր՝ բարձրացված դրույքաչափի անցման նախադրյալներ են ստեղծվել:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ




ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2021 թ. կնքվել կամ վերահաստատվել է համագործակցության 10 հուշագիր եւ պայմանագիր Բելգրադի, Լոձի, Սումիի համալսարանների, Ապադանա բարձրագույն կրթության ինստիտուտի, Հունական Արատոս ընկերության, Մշակութային երթուղիների ուսումնասիրության համալսարանական ցանցի, Բուխարեստի ագրոնոմիական գիտությունների եւ անասնաբուժական բժշկագիտության համալսարանի հետ:

2021 թ. Էրազմուս+-ի շրջանակում ՀԱԱՀ-ն ունի 47 պայմանագիր եւ ընդհանուր առմամբ այս ծրագրով համագործակցում է 35 համալսարանի հետ:

Էրազմուս+ պայմանագրերի քանակ





ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ



- «Տեխնոլոգիական շաբաթը Արցախում 2021» (Tech Week Artsakh 2021) միջոցառումների շարքը ՏՏ ոլորտի կարևոր իրադարձությունները միավորում է մեկ վայրում: Տեխշաբաթվա ընթացքում ռեկտոր Ուռուտյանը հանդես եկավ «Ագրոթեք ոլորտի վարձագման հնարավորությունները Հայաստանում եւ Արցախում» վեկույցով:
- «Նորարարության եւ տեխնոլոգիայի սինգապուրյան շաբաթի» (SWITCH) շրջանակում տեղի ունեցավ «Global Gateway to Innovation in Asia» համաժողովը, որտեղ, ի թիվս Եվրասիական տարածաշրջանը ներկայացնող հինգ այլ բանախոսների, ռեկտոր Ուռուտյանը հանդես եկավ վեկույցմամբ «Գյուղատնտեսության տեխնոլոգիական փոխակերպումը Եվրասիական տարածաշրջանում» ընդհանուր թեմայի ներքո:



- Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտի (IFPRI) «Համաշխարհային պարենային քաղաքականության՝ Եւրասիայի վերաբերյալ 2021 թ. վեկույցի» արդյունքների եւ Եւրասիական տարածաշրջանի ագրոպարենա-

յին համակարգերի վրա ԶՈՎԻԴ-19-ի ազդեցության առցանց քննարկմանը եւս մասնակցել է ՀԱԱՀ-ի ռեկտորը: IFPRI-ի հետ համատեղ այն կազմակերպել էին Պարենային ապահովության եւրասիական կենտրոնը, Տաշքենդի Վեստմինստերյան միջազգային համալսարանը եւ Համաշխարհային բանկի խումբը:



➤ ՌԴ-ում «Գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների եւ բուսաբուծական մթերքների արտադրության եւ վերամշակման նյութերի 28-րդ միջազգային ցուցահանդես»:

➤ Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանի կազմակերպած «Սերմերի արտադրության, հավաստագրման եւ մասնագետների վերապատրաստման» թեմաներով ճանաչողական այց:



➤ Խաղողի եւ պտղատու տեսակների ժամանակակից տնկարան հիմնելու վերաբերյալ խորհրդատվական այց Վրաստան:



➔ Վայիենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում ռեկտորների խորհրդաժողովին մասնակցեց Նաեի ՀԱԱՀ-ն:



➔ Վայիենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում կազմակերպված սեմինար, որին մասնակցեց Ագրային մենեջմենթ մագիստրոսական ծրագրի 13 ուսանող եւ ՀԱԱՀ 3 աշխատակից:

➔ Երկրորդ եվրասիական կոնգրեսը ՌԴ-ում:



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ուսանողական խորհրդի աշխատանքների համակարգման եւ որակի բարելավման նպատակով 2021 թ. խորհրդի մաս դարձան ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողական եւ Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի աշակերտական խորհուրդները՝ մասնաճյուղերի խորհրդի կարգավիճակով: Քոլեջի եւ վարժարանի սաները այլեւս անմասն չեն մնում կարեւորագույն հարցերի ու խնդիրների քննարկումից եւ միջոցառումների կազմակերպումից:



Տարվա ընթացքում կազմակերպվել են ավելի քան 50 մշակութային, մարզական, մտավոր, ժամանցային, ճանաչողական, բնապահպանական միջոցառումներ:



ԹԻՄ ԱԳՐՈՆ ԲԱՐՁՐ Է ՊԱՀՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԻՎԸ

Ագրարային համալսարանը մարզական հին ու բարի ավանդույթներ ունի, որ այսօր էլ տարբեր հարթակներում հաճելիորեն առանձնացնում են մեզ՝ Նաեւ մարզական առումով: 2021 թ. վոլեյբոլի, սեղանի թենիսի, հրաձգության, ֆուտբոլի, բասկետբոլի, շախմատի, ուժային մարզաձեւերի մեր թիմերը արժանավայել մասնակցություն ապահովեցին մարզական տարբեր հարթակներում: Ֆուտբոլի Թիմ Ագրո թիմը հանդես է գալիս երկրի բարձրագույն խմբում:



Ուսխորհրդի եւ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ջանքերով պարբերաբար անցկացվող միջֆակուլտետային խաղերին մասնակցել են ուսանողները, դասախոսներն ու աշխատակազմի անդամները: Ֆակուլտետներից բացի՝ այդ մրցաշարերին մասնակցել են Նաեւ վարժարանի, քոլեջի եւ Հեռակա դեպարտամենտի ներկայացուցիչները: Առողջ ապրելակերպի խթանումից չատ՝ այս մրցաշարերը նպաստում են միջանձնային կապերի ամրապնդմանը:



Փետրվարին մեր դասախոսները նվաճեցին «Դասախոսական գավաթ» մրցաշարի վոլեյբոլի գավաթը: Նույն մրցաշարի շախմատի մրցումներում հավասարը չունեցավ ՏՏ կենտրոնի աշխատակցուհի Հերմինե Մխիթարյանը: Նույն ամսում 1-ին մասնաշենքում բացվեց ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի մրցանակների ցուցասրահը: Մարտին քոլեջի ուսանող Հովհան-Նես Հովհաննիսյանը դարձավ Հայաստանի կրկնակի չեմպիոն եւ աշխարհի բրոնզե մեդալակիր՝ գրեփլինֆ ըմբշամարտի գծով: Ապրիլին մրցանակային տեղեր շահեցինք 23-րդ ուսանողական մարզական խաղերում, մայիսին՝ ֆուտբոլի «Կենտրոն համայնքի ղեկավարի գավաթ» մրցաշարում: Մայիսին Ռումինիայում կայացած բազկամարտի Եվրոպայի առաջնությունում «Մեդվաբուծություն» առարկայի դասախոս Դավիթ Ներսիսյանը նվաճեց մայրցամաքի չեմպիոնի տիտղոսը: Հոկտեմբերին Թիմ Ագրոն լավագույնս դրսևորեց իրեն ուսանողական մարզական խաղերում՝ 2-րդ մրցանակին արժանանալով: Դեկտեմբեր ամսին համալսարանն արժանացավ ԿԳՄՍ նախարարության շնորհակալագրին՝ որպես Հանրապետական ուսանողական 22-րդ խաղերին մասնակից լավագույն ուսումնական հաստատություն:

ՖԻԼԱՆՍՆԵՐ




Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մանադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացրել է ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:


Աուդիտը ներառում է 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները:

Անկախ աուդիտորի կարծիքով նշված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Ֆինանսավորման աղբյուրները



Իրականացված ծրագրերը





ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ

ԱՄՆ ՄԶԳ

Ավստրիական վարձացման գործակալություն
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը
Հայաստանում (EU GAIA)

Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամ
(FAST)

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերություն (GIZ)

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր

Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների
մրցակցային հիմնադրամ

Համաշխարհային Բանկի գրասենյակ Հայաստանում

Հայաստանում Ճապոնիայի դեսպանություն

Հայաստանում Արգենտինայի դեսպանություն

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ)

ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ ՓԲԸ

Ռազմավարական վարձացման գործակալություն ՀՀ
Սարյան Զառուկյան բարեգործական կազմակերպություն
ICARE հիմնադրամ

Փառնագեան հիմնադրամ

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ

Volkswagen հիմնադրամ

Վիշեգրադի միջազգային հիմնադրամ

Կանաչ արահետ ՀՀ

My forest Armenia բնապահպանական կազմակերպություն

Մարդը կարիքի մեջ (People in Need) ԲՀԿ

Գրեգ Բալբալյան, բարերար, Կանադա

**ՇՆՈՐՀԱԿԱՆ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տեղյան 74,
Երևան 0009, ՀՀ
(+374 10) 52 45 41
info@anau.am

